ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թվականի հոկտեմբերի 29-31-ը ք. Դամասկոս

(Սիրիայի Արաբական Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**

Սուրեն Կարայան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Գործուղման վայրը՝ ք. Դամասկոս (Սիրիայի Արաբական Հանրապետություն)

Գործուղման ժամկետները՝ 29.10.2017- 31.10.2017

4. Հրավիրող կողմը

Սիրիայի Արաբական Հանրապետության էկոնոմիկայի և արտաքին առևտրի նախարարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Սուրեն Կարայանի գլխավորած պատվիրակության այցի ընթացքում կայացել են հանդիպումներ ՍԱՀ նախարարների խորհրդի նախագահի, կառավարության այլ անդամների, պետական մարմինների ղեկավարների հետ՝ Հայաստանի և Սիրիայի միջև առևտրատնտեսական համագործակցության հեռանկարները քննարկելու նպատակով: Այցի ընթացքում կազմակերպվել են նաև հանդիպումներ ՍԱՀ մասնավոր հատվածի ներկայացուցիչների, ինչպես նաև պոտենցիալ ներդրողների հետ:

Այցի շրջանակներում ներկայացվել են շնորհանդեսներ ՀՀ ներդրումային միջավայրի, ազատ տնտեսական գոտիների և Հայաստանի զբոսաշրջային գրավչությունների վերաբերյալ:

6. Քննարկված թեմաները

Երկկողմ համագործակցության զարգացմանն ու ընդլայնմանը ուղղված գործնական քայլերը տնտեսության տարբեր ոլորտներում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Սուրեն Կարայանի գլխավորած պատվիրակության այցի ընթացքում կայացել են հանդիպումներ ՍԱՀ Նախագահի, ՍԱՀ նախարարների խորհրդի նախագահի, ՍԱՀ էկոնոմիկայի և արտաքին առևտրի նախարարի, ՍԱՀ զբոսաշրջության նախարարի հետ:

Մասնավորապես,Սիրիայի Արաբական Հանրապետության նախարարների խորհրդի նախագահ Իմադ Խամիսի հետ հանդիպման ընթացքում նախարար Կարայանը վստահություն է հայտնել, որ իր այցը նոր լիցք կհաղորդի ճգնաժամի պատճառով որոշակի հետնահանջ ապրած հայ-սիրիական երկկողմ համագործակցությանը՝ հիմք հանդիսանալով հետագա համատեղ արդյունավետ աշխատանքների նախագծման և իրականացման համար: Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը նշել է, որ Հայաստանի փորձառությունն ու ներուժը կարող են օգտակար լինել սիրիական կողմին՝ ավերածության ենթարկված տնտեսության տարբեր բնագավառների վերականգնման հարցերում, և որ Հայաստանը պատրաստ է տրամադրել նման աջակցություն բարեկամ Սիրիային: Նա հավելել է, որ Հայաստանը կարող է կամուրջ հանդիսանալ սիրիական արտադրանքը միջազգային շուկաներում ներկայացնելու համար:

Նախարար Կարայանը վստահեցրել է նաև, որ, անհրաժեշտության դեպքում, Հայաստանը կարող է սիրիական կողմին տրամադրել բարձրորակ մասնագետներ՝ նախագծման, շինարարության, ճանապարհաշինության, գյուղատնտեսության և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում:

Վարչապետ Խամիսը ողջունել է հայկական կողմի պատրաստակամությունը մասնակցելու Սիրիայի վերականգնման ծրագրերին և ընգծել, որ Սիրիան մեծապես հետաքրքրված է տեսնել հայկական ապրանքներն իր շուկայում՝ միաժամանակ վստահեցնելով, որ հայ արտադրողները կօգտվեն լայն արտոնություններից:

Հանդիպման ընթացքում քննարկվել է հայ-սիրիական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքների վերսկսման հնարավորությունը:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Սիրիայի Արաբական Հանրապետության (ՍԱՀ) էկոնոմիկայի և արտաքին առևտրի նախարար Մուհամմադ Սամեր Խալիլի հետ հանդիպման ընթացքում

կողմերը քննարկել են գործնական մի շարք քայլեր երկու պետությունների միջև տարբեր ոլորտներում տնտեսական փոխգործակցությունն աշխուժացնելու նպատակով, ինչպես նաև մտքեր են փոխանակել Սիրիայի վերականգնման ծրագրերում Հայաստանի հնարավոր մասնակցության վերաբերյալ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել երկու նախարարություններում ստեղծել մասնագիտացված խմբեր, որոնք կաշխատեն ծրագրերի նախագծման վրա: Արդյունավետ առևտրատնտեսական գործակցությանը նպաստելու համար կողմերը համաձայնել են փոխանակել ապրանքների և արտադրանքի ցուցակները, որոնք առավել մեծ պահանջարկ ունեն երկու երկրների սպառողական շուկաներում: Կարայանը առաջարկել է ստեղծել համատեղ արտահանող-ներմուծող ընկերություն:

Կողմերը նաև պայմանավորվել են Դամասկոսում և Երևանում անցկացնել Սիրիայի և Հայաստանի արդյունաբերական և զբոսաշրջային շաբաթներ:

ՀՀ պատվիրակությունը հանդիպել է նաև Սիրիայի Արաբական Հանրապետության զբոսաշրջության նախարար Բուշր Յազջիի հետ: Հանդիպմանը քննարկվել են զբոսաշրջության ոլորտում երկու երկրների համագործակցությունն աշխուժացնելու հնարավորությունները:

Նախարար Յազջին նշել է, որ չնայած ահաբեկչական պատերազմի հետևանքով զբոսաշրջության անկմանը՝ Սիրիան ակտիվ աշխատանքներ է իրականացնում ոլորտի վերականգնման ուղղությամբ և ակնկալում է բարեկամ երկրների, հատկապես Հայաստանի հետ տուրիստական փոխայցելությունների աշխուժացում: Կողմերը համակարծիք էին, որ զբոսաշրջության ոլորտը զարգացնելու համար առկա են բարենպաստ նախապայմաններ, մասնավորապես՝ ընթացիկ տարվա հունիսի 28-ից գործող Դամասկոս-Երևան չվերթը:

Ընդլայնված կազմով ՀՀ և ՍԱՀ պատվիրակությունների նիստում Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյանը ներկայացրել է Հայաստանի զբոսաշրջության ոլորտը, ինչպես նաև ուրվագծել այդ բնագավառում երկկողմ համագործակցության հեռանկարները:

Հանդիպման ընթացքում ՀՀ պատվիրակությանը ցուցադրվել են Սիրիայի զբոսաշրջության շրջանների մասին կարճ տեսահոլովակներ:

Նախարար Սուրեն Կարայանը հանդիպել է Դամասկոսի Հայ առաքելական թեմի առաջնորդ Արմաշ արքիեպիսկոպոս Նալբանդյանի և Դամասկոսի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Նախարարը համայնքի ներկայացուցիչներին տեղեկացրել է Սիրիա կատարած այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների և տարբեր պաշտոնյաների հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքների մասին: Նա նշել է, որ ուրվագծվել են նախադրյալներ՝ ստեղծելու համատեղ արտադրություններ և սիրիացի գործարարներին հնարավորություն ընձեռելու, Հայաստանում արտադրություն ծավալելով, մուտք գործել ԵԱՏՄ և ԵՄ շուկաներ: Նախարարը ներկաների հետ քննարկել է համայնքի խնդիրները, ինչպես նաև պատասխանել է դամասկոսահայությանը հուզող հարցերին:

Սիրիա կատարած այցի շրջանակներում Հայաստանի պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել նաև ՍԱՀ ներդրումների հիմնարկությունում և Սիրիայի առևտրաարդյունաբերական պալատում:

9.Գործուղվողը

Սուրեն Կարայան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

07.11.2017թ.